ՓՈԽՈՒՄՆ ՅԱՃԽԱՐՀԷՍ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ

ՍՈՒՔԻԱՍԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՈՄԱԼԵԱՆ

ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱԲԲԱՅԻ

Դառն և դժուարին պարտք 'ի վերայ եդան օրագրիս, նմանեցուցանել այսպէս զդէմս իւր արտասուախառն սևակաւ, և գուժել իւրոցն ընթերցասէր մտերմաց զորբանալ Ուխտիս Մխիթարայ յանակնկալս 'ի սիրայնոյ Հօրէն, և յաստուածապատիւ Հոգևոր Տեառնէն ՍՈՒՔԻԱՍԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՈՄԱԼԵԱՆ. և չիք բան մեծի դառնութեանն անուշիչ, բայց յիշատակ յետին սպասաւորութե զոր մատուցանել ստիպի բարերարին իւրում վեհի 'ի շնորհապարտ մտացն։

Չորրորդ զսա ունելով մերոյ Միաբանութեանս արժանաժառանգ յաջորդ յաթոռ ռաբունապետին Մխիթարայ մեծի 'ի քսան և երկուց ամաց հետէ, զթելս բարենշան աւուրց կենդանութեան իւրոյ 'ի նորին կենացն 'ի հիւսս անանջատ համարէր խառնեալ մատամբ բարեխնամ Արարչին. այլ աւա՜ղ, բազմաժամանակեայ բուռն խսթութիւն դարմանեալ այնպիսում կենաց, ուր ուրեմն զօրացաւ քան զսրտառուչն պաղատանս որդեկաց նորա առ տէր, և քան զհայրասէր խնամն որովք դիւր վշտացն առնել ճգնէին ամենայն փութով. և խզեաց զթելն ոսկեթել, և ջլատեաց զնորին կենդանութիւն։ Բայց ոչ. ոչ խզեցան աւուրք երջանկին մերոյ Հօր, այլ ընդ անմահական կեանս անուանակից սրբոյն իւրոց յերկինս կցեցան, և զմեր կենդանութիւն 'ի

նոյն խառնեցին ։

Քանզի յաւուր տօնի սրբոց Սուքիասանց, յորում ըստ տարեկանացն մերոց գեղեցիկ սովորութեանց և յայսնուագ բոլորեալ կայաք որդեակքըս իւր, ա՛հ, ոչ զաթոռով Հայրապետիս, այլ զմահճօքն մահու, և զերկարութիւն անգին կենացն մաղթէաք նմա դողդոջոտ բարբառով ալեզարդ ծերունեաց և ջերմաջերմն արտասուօք ժիրաժիր երիտասարդաց, հոգեզուարճն այն յամենայնի և անդորրամիտն Գլուխ զանմեկնելին 'ի հայրենի դիմացն զժպիտ քաղցրութեան յաստուածարեալ դէմս իւր առաւելութեամբ իմն ծաղկեցուցեալ, բանիւ շրթանց զշնորհակալիսն ևեթ յայտ արար առ մեզ, և աջոյն սրբով զօրհնութիւն իւր հայրենի բաշխեաց ետ մեզ 'ի միակ ժառանգութիւն քան զամենայն գանձս աշխարհի ցանկագոյն ։ Զայս բանիւ և արդեամբք իսկ և մօրքն և սրտիւ, բա՛բէ, ընդ Սուքիասանցն անշուշտ իւրոց սիրելի վկայից խօսէր արդարն, և հրաւիրանացն նց 'ի վերին օթևանսն զուարթերես խնդութեամբ անսայր հպատակել։ Եւ չև ընդմիջեալ տխրական գիշերոյն, մինչդեռ դասք որդեկացս 'ի ծունկս խոնարհեալ զհայրենի անկողնաւն՝ աղօթս միաբանականս 'ի յուղարկ արդարոյն մատուցանէաք, և աստստին բարեխօս որդեկացս լքելոց առ Աստուած զամբիծ հոգին մաղթէաք՝ ննջեաց Հայրն մեր զնինջ արդարոց, և թռեաւ յանմահիցն խորանս ։ Երանի՜ նմա զի այնպիսեաւ սրբութեամբ եկեաց, և այսպիսի մահուամբ յաստեացս փոխեցաւ. երանի՜ և մեզ, զի այնպիսւոյ Հօր գտաք որդիք, որոյ վարուցն և մահուանն նախանձելի յիշատակ անմոռաց կացցէ մնասցէ 'ի մտաց մերոց ։

Ի դէպ էր արդեօք երկարագոյն բանիւք աւանդել աստանօր զպատմութիւն վարուց աստուածընտիր հայրապետիս մերոյ. այլ չափ և պայման դուզնաքեայ թերթիցս չներեն մեզ զսոյն ։ Աստ գրեսցի առ ժամս սուղ ինչ բովանդակութի աստուածահաճոյ կենացն ընթացից ։

Ծնեալ էր նա յամի տեառն 1776 'ի վեցերորդի աւուր ամսեանն փետրուարի 'ի բարեկրօն և յազնուական տոհմէ Սոմալեան-Հիւտավերտեանց 'ի Բիւզանդիա ։ Անդստին 'ի մանկութէ տիոցն զգաստասէր երևեալ և հոգեսէր, առ ոտն կոխեաց զմեծութիւն և զփառս աշխարհի, և ապաստանարան անքոյթ խնդրեալ իւրոցն առաքինութեանց՝ յամի 1796 փութացաւ պատսպարել 'ի կղզեկիս Մխիթարայ, և 'ի 1800 'ի 25 աւուր հոկտեմբերի կամակարմտօք և զուարթութեամբ ոգւոյ դաշնաւորէր ընդ Տեառն ուխտիւք կրօնիս. որպէս և ինքն իսկ զլրումն ըղձիցն այսու բանիւք յայտ առնէ 'ի ժամանակագրութեան իւրում. "Օրհնեալ է ժամն յորում ուխտեցի" ։

Եւ արդարև յայտնի իսկ եղեն օրհնութեան ժամուն արդասիք և յամենայն 'ի կեանսն՝ զոր անցոյց 'ի գործս բարութեան, 'ի փրկութիւն ոգւոց, 'ի վարժս գիտութեանց և լեզուաց, և առանձինն 'ի զարգացումն հայ դպրութեան. որում վկայէ և Պատմութիւն մատենագրութեան ազգիս մերոյ, որ անտիպ կայ տակաւին, և իտալականն ևեթ համառօտութիւն տպագրեալ է 'ի 1829 ։

Զամն եօթն 'ի քարոզութեան բանին վաստակեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ զամենեցուն իսկ զմեծարանս և զսէր յանձն իւր ձգէր ազնուական և քաղցր բարոյիւքն. և վերստին կոչեցեալ 'ի վանս՝ զդաստիարակութեան մանկտւոյն առնոյր զհոգ ։

Այլ հարկ էր առաքինութեան նորա և անընկճելի ճգանցն 'ի սէր ուխտիս և ազգին մերոյ՝ ընդ դժուարագոյն ևս կիրթս անցանել, յորժամ դէպ եղև նմա ճանապարհ 'ի Հնդիկս առնել ընդ ումեմն 'ի կրօնակից եղբարցն առ 'ի ստանալոյ ազգիս զբարեյիշատակ ազգասիրին Աղա Սամուէ-

լի Մուրատայ զհրիտակ բարերարութեանն աւանդելոյ 'ի ձեռս Միաբանութեան մերոյ 'ի կառուցումն Մուրատեան վարժարանին ։

Դարձ արարեալ անդրէն 'ի վանս անխոնջ պարապէր 'ի վաստակս գործոց կրօնից, և 'ի հրահանգս իմաստից, յորս պայծառագոյնս փայլեցան առաքինութիւնք նորա բազմապատիկք. մինչ զի 'ի փոխել յաստեացս ամենապատիւ Տեառն Ստեփանոսի Ագոնց, ընդհանրական Աբբայի ուխտիս, յամի տեառն 1824 միաբան հաւանութեամբ ընտրեցաւ Սուքիաս Ս արդապետ 'ի տեղի նորա. և 'ի 1826 'ի 21 աւուր ամսեանն մայիսի ձեռնադրեցաւ յարքեպիսկոպոս Սիւնեաց 'ի մայր եկեղեցւոջ սրբոյն Մարկոսի 'ի գերյարգոյ պատրիարգէ քաղաքիս 'ի Լատիսլաւէ Փիրքերայ ։

Յամի 1830՝ գնացեալ 'ի Հռոմ՝ առաջիկայ գտաւ ընտրութեան Գրիգորի ԺԶ սրբազան քահանայապետի յաթոռ սրբոյն Պետրոսի, և յետ ոչ բազում ինչ աւուրց դարձ առ իւրսն արարեալ՝ երևեցաւ 'ի նմա ախտ շնչարգել, որ այնչափ բռնացաւ զառաջինն զի և դերևացան առ նովաւ ճարտարութիւնք բժշկաց ։ Այլ 'ի ձեռնթափն լինել 'ի նմանէ մարդկեղէն հնարից, տեսան յայտնապէս արդիւնք ջերմեռանդն աղօթից որդեկաց նորա .։ քանզի իբրև 'ի դրանց մահուն զերծեալ անկարծելի, պարգևեցաւ իմն նոցա հայրն իւրեանց ցանկալի այլ ևս ամս հնգետասան. և թէպէտ ոչ 'ի սպառ մերժեցաւ 'ի նմանէ դժուարինն այն խօթութիւն, սակայն նա անխափան ամենևին անդրէն 'ի տեսչութիւն գործոց վանացս դարձ առնէր, և այնչափ եռանդագին և աչալուրջ այնուհետև էր 'ի գործս Միաբանութեան՝ զի և հիւանդութեանն գոգցես չերևէին նշմարանք ։

Քանզի առ նովաւ ոչ միայն հիմնարկեալն յերանաշնորհ րաբունապետէն մերմէ և պայծառացեալն առ երկօքումբք յաջորդօք նորա յառաջադիմութիւն ուխտիս 'ի պէսպէս գիտութիւնս աճեաց և զարգացաւ օր քան զօր, այլ և նորօրինակ յառաջադիմութեամբ բարգաւաճեաց յամենայնի ։ Նա ինքն զտպագրութիւն Նախնեացն մատենագրութեան ետ ազգիս ընծայել, և զոմանս 'ի նոցանէ յեղուլ յեւրոպական լեզուս. և հնարէր ևս ինքնագիր մատենիւք և թարգմանութեամբք և գպրոցական կարևոր գրենոյն յօրինուածովք, և օրագրիս ևս հրատարակմամբ ծաւալել զգիտութիւն յազգս մեր ։

Չպակասեցին նմա արդարև և հոգք բազումք և վշտակրութիւնք. այլ նա ընդաբոյս երկայնմտութեամբն և աստուածեղէն շնորհացն օժանդակութեամբ 'ի կամս բարձրելոյն գոլով յամենայնի ապաստան՝ անվրդով պահէր յանձին և յիւրսն զխաղաղութիւն ոգւոյ, և ոչ երբէք տագնապէր, այլ մանաւանդ բազում անգամ երկրորդէր զառած մերոյ հիմնադրին և զյաջորդաց նորա և զընտիր աշակերտաց, եթէ “Վիշտք և նեղութիւնք 'ի քաջալերս են մեզ և 'ի կազդուրումն յօգուտ փրկութեան ոգւոց և լուսաւորութեան ազգիս„ ։

Սակայն ոչ յապաղեցին և երկինք փոխարինել անվկանդ հաւատոցն և արութեան սրտին ազգի ազգի յաջողութեամբք. քանզի 'ի խոնարհել աւուրց կենաց իւրոց ետես զարդիւնս կամաց երկոցուն անմահ բարերարաց ազգիս զՍամուէլի Մուրատայ և զԷդուարդայ Ռաֆայէլի, և զյառաջադէմ զարգացումն զվարժարանացն հիմնելոց նոցին առատաձեռնութբ, և իւրոցն վաստակովք ծաղկելոց գեղեցիկ դաստիարակութեամբ մերոյ մանկտւոյն ։

Դարձեալ և հայրենի սիրոյն պարգև չքնաղ՝ պարգևեալ ուխտիս 'ի մեծէ Հայրապետէն Հռովմայ Գրիգորէ վեշտասաներորդէ 'ի սկիզբն այսր տարւոյ՝ սփոփանս անչափ և խնդութիւն անպատում եբեր նմա՝

իբրու առ հաւատչեայ երկնային պարգեւացն զոր պատրաստէր նմա Քրիստոս յերկինս ։ Քանզի և որք զերկնայնոցն յերկրի բերեն յանձինս զօրինակ, երկրաւոր ինչ վարձք չեն նոցա արժանի ։

Նա հաս ժամ պսակելոյ առաքինաջան մշակին . և 'ի 6 փետրուարի յաւուր ծննդեան իւրոյ 'ի զայրանալ տկաւախտին խնդրեաց ընկալաւ փափաքանօք զթօշակ յաւիտենական Ճանապարհին և զօծումն վերջին, և զաւուրս երիս 'ի պատրաստութիւն նախանձելի ուղևորութեանն կեցեալ զուարթութեամբ՝ վերացաւ առ 'ի մէնջ, և եթող զիւրսն 'ի սուգ և 'ի զգածմունս, զոր զայս օրինակ յայտ առնէ մի ոմն 'ի տխրազգեցիցս իւրոց որդեկաց ։

Ո՜հ, թէ 'ի վայրս անդ յորազուարձքն խընդեց
Գուցէ վառել հրատ ողբոմախառըն խանդեց,
Զուարթուն, ըզսիրտս 'ի սնարեց բարձ տապանիս
Զանկեալ բուրվառս զեղուն 'ի զմուռըն ցաւոց,
Շարժլեա 'ի թելս յուսոյ, սիրոյն հա՛ր ըզբոց,
Ծըխեսցին սուգք 'ի կայծակունս ծիրանիս : . . .
Ո՜հ ոչ, քանի՞ դառն է, Աստուած, որբութի՛,
Թէ և 'ի մահ հանապազ յայս ողբնիմք տուն .
Հատոյք հեծեն հոգւոց ընդ Հայր այսգունակ,
Երկնաւորին շօշափական հայելի .
Յորմէ հըրճուանք 'ի սիրտս ազդեալ լինելի
Գերակայիցըն զուգակիցք կարծէաք :
Իսկ դու գանձուց Հոգւոյն հաստուած սըրտագին,
Մըխիթարայ տանս և Հայոց ձիր անգին,
Ա՜յսպէս երագս 'ի մէնջ սլացեալ թողուս զուրկ .
Զև բոլորեալ երկանցդ անմահ մի պըսակ,
Բա՛ղդ անհամբոյր, ահա սուխմիք նոր տեսակ
Սևասարաս հիւսել պըսակ, անկամ տուրք :
Օ՜ր բաղձալի, և դու եղեր աղաժամ . . .
Յաւիտենից մահ չըստացաւ բարեկամ .
Ակօղեցաւ քնար, քստմնասարսուռ դելան լարք,
Եւ քաւութեանց բաժակք լըցան արտասուօք,
Բարեկենդան մաղթանքս եղեն անողոք .
Ո՜վ եթերին կամք, ի՞բր հիգացս էք դըժուարք :
Եւ տեսաք, ա՜հ, և ընկճեցաք դառն 'ի տես,
Զայս առաջին՝ Հայր մեր չարար մեզ երես .
Երբ բոլորեալ զնովաւ 'ի դող սիրտ 'ի կուրծ
Զանգիտէաք յերկինս հայել և յերար,
Զզարկ և զաչկունսըն գիտելով անդադար,
Թէ դարձցի՞ շունչն 'ի սահմանէն մազապուրծ :
Բացեալ կային առ նովաւ մեր իսկ չիրիմք
Եւ նըւաղեալ թափէին իղձք մըտերիմք .
Բարձր էր 'ի մէնջ երկնից վըճիռն անաչառ .
Այնքան օրհնաք սրտիւ առ մին այն օրհաս
Ոչ զօրեցին և այն ճըգունք և ըսպաս
Դարձուցանել զարին 'ի կէան իւր պայծառ : . .

Ո՜ Հայր, ո՜ կառք և երիվարք մեր հոգւոց,
Ընդ տէրունի շաւիղ շարժիչ մերս անուոց .
Դու վերանաս, և ճապաղին սիրտքս յերկիր .
Հե՞մ երագես Հայր . երկի՞նք . քո՞ են երկինք .
Վարուցդ անբիծ ճանապարհք բաց են վերինք .
Եւ զի՞ գործեն այսքան որդեակք վըշտակիր :
Ո՞ տեսցէ յայսմ հետէ 'ի մեզ զորդեակս իւր
Ըզձեռասունս, ըզգործս, արդիւնս խնամոց բիւր .
Ո՞ սրբեսցէ զաչս որ սրբիլ չառնուն յանձն,
Ո՞ յամպամած դէմս ջահեսցէ զայն ժըպիտ
Որով զամէն վշտաց 'ի մէնջ լուծեալ խիթ
Թեթև ըզբեռն իսկ գործէիր մեզ փանձանց :
Երջանկութիւն զոր յորդեցեր՝ յորդէ զցաւս
Բազմապատիկ 'ի քէն ելոց հայրազըրաւս .
Ըզքէն խօսին, ըզքեզ առնեն ազդ համայն
Շաւիղ կենացս յոր քև մըտաք և ուսմանց,
Ջանիցս եռանդն ոյր վառեցեր դուն ըզխանձ,
Յարկքն իմաստից յաջորդ կնքեալք աստուածեան :
Լացէք եղբարք, լացէք մանկտի զանզոյգն Հայր
Որ զոսկեղէն գարուն նախնեաց եցոյց ծայր,
Որ զանմահիցն հարազատ գիւտ գիտութեան
Մեզ և հանուրց Հայկազանց եդ գիւրահուպ,
Եւ զանգին տառս յամանակէն ալեծուփ
Թափեալ ընջեաց և պերճագոյնս 'ի լոյս հան :
Ինքն 'ի հովտէս երկանց արդ անց տարադէմ
Յարժանաւորն հանգիստ անձին 'ի յԵդեմ .
Պարտ իսկ հանգչել տաժանելոյն վաստն մեր
Որ ընդ խաչին իւրում կապեաց խաչս յոգունս,
Ցիւրն ըզմերցաւս հիւսեաց ծաղկանց իբր ըզփունջ .
Յերկնից հասեալ էր սեամն, առ գութ աստ յամէր :
Հանգի՛ր Օծեալ Գըլուխ, հանգի՛ր արդ յամայր,
Հոլաթևեալ հոգւովդ և անդ գոլ մեզ Հայր .
Ահա փոխեմք 'ի քաղցր ըզդառն արտասուս
Յօժարագոյնք յայսմ հետէ աչք 'ի յերկին,
Ուր յաւելար Գանձ մեր 'ի գանձս 'ի նախկին՝
Ցոյց սէրն անժոյժ հալեալ ծըխիմք 'ի վեր կոյս :